ՔԱՂՎԱԾՔ

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 06.07.2022թ. ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Ս/թ հուլիսի 06-ին՝ ժամը 12:00-ին հրավիրված ավագանու արտահերթ նիստին մասնակցելու համար մինչև ժամը 11:30 ավագանու 33 անդամներից ներկայացել էին 15-ը՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝
Վանիկ Օհանյանը, Լուսինե Թադևոսյանը, Վահագն Մկրտչյանը, Հերմինե Մանուկյանը, Գևորգ Հարությունյանը, Արմեն Հարությունյանը, Նոնա Հովհաննիսյանը, Դավիթ Խաչատրյանը, Էլիզա Մարգարյանը:
«Հայաստանի աշխատավորական սոցիալիստական» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝
Արկադի Փելեշյանը, Արման Բերնեցյանը, Անենա Դեմիրխանյանը, Կարեն Դավթյանը, Հասմիկ Խլոպուզյանը:
«Ապրելու երկիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝
Արտավազդ Ալավերդյանը:

Ժամը 11:30-ին համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արկադի Փելեշյանը նշեց, որ չնայած օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում ավագանու բոլոր անդամները զանգվածային լրատվամիջոցների, Վանաձորի համայնքապետարանի կայք-էջի ու ցուցանակների, ինչպես նաև անհատական հեռախոսազանգերի միջոցով իրազեկվել են արտահերթ նիստի հրավիրման մասին, սակայն ավագանու անդամների կեսից ավելին չեն ներկայացել նիստին:

Համաձայն «ՏԻՄ» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ավագանու նիստը իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:

Նիստը չկայացավ:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՀԱՅԿ ՎԻՐԱԲՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց՝ Է. Հովսեփյանը